Հաստատված է
ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի
2017 թ. հունվարի 26-ի նիստում
ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ՝
Հ. Հ. Հակոբյան _____

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն աշխատակարգը սահմանում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ կամ համալսարան) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) նախագահի, քարտուղարի և անդամների իրավասությունը, խորհրդի նիստերի նախապատրաստման, գումարման, անցկացման, քվեարկության, նիստերի արձանագրման, որոշումների ընդունման կարգը:

1.2. ԳՊՀ կանոնադրության 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ խորհրդի աշխատակարգը հաստատում է խորհուրդը:

1.3. Խորհրդի աշխատանքների հետ կապված ծախսերը կատարվում են ԳՊՀ միջոցների հաշվին:

2. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Խորհուրդը համալսարանի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող կոլեգիալ մարմինն է, որը ստեղծվում է 5 տարի ժամկետով, համալսարանի կանոնադրությանը համապատասխան:

2.2. Խորհուրդն ունի նախագահ և քարտուղար: Ըստ անհրաժեշտության՝ խորհուրդը ձևավորում է ժամանակավոր հանձնաժողովներ կամ աշխատանքային խմբեր, որոնք ուսումնասիրում են առաջադրված հարցերը, պատրաստում նախագծեր և դրանք ներկայացնում խորհրդին:

2.3.Խորհուրդը ձևավորվելուց հետո իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար: Խորհրդի նախագահը չի կարող լինել ԳՊՀ հիմնական հաստիքային աշխատող կամ սովորող:

2.4.Խորհրդի իրավասությունն է՝

1) իր աշխատակարգի հաստատումը,

2) ռեկտորի ընտրության կանոնակարգի մշակումը, հաստատումը, ընտրության հայտարարումը, կազմակերպումը, ռեկտորի ընտրության և լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

3) ռեկտորի տարեկան հաշվետվության լսումն ու գնահատումը,

4) ԳՊՀ գործունեության տարեկան և ռազմավարական ծրագրերի հաստատումը,

5) ԳՊՀ կառուցվածքի հաստատումը,

6) ԳՊՀ հաստիքացուցակի հաստատումը,

7) ԳՊՀ գործունեության մասին տարեկան հաշվետվությունների, ԳՊՀ եկամուտների ու ծախսերի տարեկան նախահաշվի և դրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումը,

8) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշման ընդունումը,

9) ԳՊՀ գործունեության, այդ թվում՝ ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունը, ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձի ընտրությունը,

10) խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

11) ռեկտորի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող հրամանների, հրահանգների և ցուցումների կասեցումը կամ դրանք ուժը կորցրած ճանաչելը,

12) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,

13) ԳՊՀ լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը,

14) ԳՊՀ լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

15) ԳՊՀ կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխության, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը,

16) ԳՊՀ գույքի տնօրինման կարգի հաստատումը,

17) քսան միլիոն դրամի կամ դրան համարժեք արտարժույթի սահմանաչափը գերազանցող պայմանագրերի հաստատումը,

18) օրենքով, համալսարանի կանոնադրությամբ, սույն աշխատակարգով նախատեսված, ինչպես նաև ԳՊՀ մյուս մարմիններին օրենքով չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

19) Խորհրդի իրավասությանը պատկանող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

2.5. Խորհրդի նախագահը՝

1) հրավիրում է խորհրդի նիստերը և նախագահում դրանք,

2) ստորագրում է խորհրդի որոշումները,

3) խորհրդի համաձայնությամբ՝ կարող է ստեղծել հանձնախմբեր և նշանակել դրանց նախագահներին, մասնավորապես, համալսարանի կանոնադրությամբ և սույն աշխատակարգով նախատեսված՝ ԳՊՀ ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման (ստուգում, ուսումնասիրում և այլն) ու ԳՊՀ կանոնադրությամբ նախատեսված հարցերի նախնական քննարկում իրականացնելու և դրանց վերաբերյալ խորհրդին եզրակացություններ (տեղեկանքներ) ներկայացնելու համար,

4) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրության վարումը,

5) խորհրդի քննարկմանն է ներկայացնում խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծը,

6) ԳՊՀ անունից ռեկտորի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր:

2.6.Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

2.7. Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Խորհրդի անդամների համար կարող է սահմանվել փոխհատուցում՝ նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է խորհուրդը:

2.8. Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

1) ներկայացնելու առաջարկություններ խորհրդի նիստի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,

2) նախապատրաստելու և խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ, որոշումների նախագծեր,

3) ստանալու տեղեկություններ ԳՊՀ գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի մասին,

4) ստանալու իրենց պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

2.9. Խորհրդի անդամները պարտավոր են՝

1) մասնակցել խորհրդի նիստերին,

2) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով ՀՀ և, մասնավորապես, ԳՊՀ շահերից:

2.10. Խորհրդի անդամի լիազորությունը խորհրդի որոշմամբ դադարում է՝

1) իր դիմումի համաձայն,

2) լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում,

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում,

4) եթե դադարել են խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները,

5) որպես սովորող առաջադրվելու դեպքում՝ սովորողի կարգավիճակը կորցնելու հետևանքով,

6) ըստ պաշտոնի առաջադրվելու դեպքում՝ պաշտոնից ազատվելու հետևանքով,

7) նրա մահվան դեպքում:

2.11. Խորհրդի քարտուղարը՝

1) ծանուցում է խորհրդի անդամներին նիստի օրվա, տեղի և օրակարգի մասին,

2) գրանցում է խորհրդի՝ նիստին մասնակցող անդամներին,

3) կազմում և ստորագրում է խորհրդի նիստերի արձանագրությունները,

4) կատարում է սույն աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ:

3. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

3.1. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում և աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

3.2. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն տարեկան մեկ անգամ՝ խորհրդի նախագահի կողմից:

3.3. Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացվելուց հետո 30 օրվա ընթացքում:

3.4.Խորհրդի նիստերը կարող են անցկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:

3.5. Խորհրդի որոշումներն ընդունվում են օրենքով սահմանված կարգով:

3.6. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Եթե խորհրդի նիստում քննարկվում է խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ

փոխկապակցված անձի գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

3.7. Նիստերը նախապատրաստում են խորհրդի նախագահը և քարտուղարը՝ անհրաժեշտության դեպքում այդ աշխատանքներին ներգրավելով խորհրդի մյուս անդամներին:

3.8. Խորհրդի առաջին նիստը մինչև նախագահի ընտրությունը նախագահում է տարիքով ավագ անդամը, քարտուղարում՝ խորհրդի կրտսեր անդամը:

3.9. Համալսարանի ռեկտորի ընտրության նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է ԳՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգով:

3.10. Խորհրդի արտահերթ նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև կրթության կառավարման լիազոր մարմնի, համալսարանի ռեկտորի, խորհրդի կամ գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով:

3.11. Կրթության կառավարման լիազոր մարմնի, համալսարանի ռեկտորի, խորհրդի և գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և օրակարգով:

3.12. Նիստի հրավիրման և օրակարգի մասին խորհրդի քարտուղարը խորհրդի անդամներին տեղեկացնում է նիստից առնվազն հինգ օր առաջ՝ գրավոր ծանուցմամբ:

4. ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԵՐԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Խորհրդի արտահերթ նիստ գումարելու՝ խորհրդի նախագահին ներկայացված գրավոր պահանջը պետք է պարունակի խորհրդի օրակարգում առաջարկվող հարցերը՝ խորհրդի կամ գիտական խորհրդի՝ արտահերթ նիստը պահանջող անդամների ստորագրություններով:

4.2. Կրթության կառավարման լիազոր մարմնի, ռեկտորի, խորհրդի և գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի գրավոր պահանջը ստանալու պահից յոթ օրվա ընթացքում խորհրդի նախագահը պետք է ընդունի խորհրդի նիստ գումարելու մասին որոշում:

5. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ՔՎԵԱԿԱԶՄԸ

5.1. Խորհրդի անդամների ներկայությունը գրանցում է խորհրդի քարտուղարը՝ նիստը սկսելուց առաջ: Քվեակազմը չապահովելու դեպքում խորհրդի նախագահի որոշմամբ կարող է երկարաձգվել գրանցումը մինչև քվեակազմի ապահովումը, կամ հետաձգվել նիստը:

5.2. Խորհրդի քվեակազմի բացակայության պատճառով հետաձգված նիստը նույն օրակարգով գումարվում է ընդհանուր կարգով:

6. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

6.1. Խորհրդի նախագահը, բացելով խորհրդի նիստը, հայտարարում է քվեակազմի առկայությունը և քվեարկության դնում օրակարգը:

6.2. Խորհրդի անդամները կարող են օրակարգի համար առաջարկել հարցեր, որոնք դրվում են քվեարկության:

6.3. Օրակարգի հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ելույթների տևողությունը որոշում է խորհուրդը:

7. ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե ԳՊՀ կանոնադրությամբ, սույն աշխատակարգով կամ խորհրդի որոշմամբ քվեարկության այլ կարգ չի սահմանվել:

7.2. Խորհուրդը կարող է ընդունել որոշում փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու մասին:

7.3. Փակ, գաղտնի քվեարկության քվեաթերթիկները պատրաստվում են խորհրդի քարտուղարի կողմից:

8. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

8.1. Խորհրդի հանձաժողովների կառուցվածքը և կազմը որոշում է խորհուրդը:

8.2. Խորհրդի հանձաժողովի անդամները հատուկ կարծիքի իրավունք ունեն, որը ներառում են հանձնաժողովի արձանագրության մեջ և այդ մասին տեղյակ պահում խորհրդին:

9. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Խորհրդի նիստի արձանագրությունը կազմում է խորհրդի քարտուղարը՝ երկու օրինակով, խորհրդի նիստը ավարտվելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:

9.2.Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը:

9.3.Խորհրդի նիստի արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը, քվեակազմը, նախագահը, քարտուղարը, օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները:

10. ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

10.1. Խորհրդի որոշումները կենսագործվում են ԳՊՀ ռեկտորի հրամաններով: